

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՆԺԵԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ը ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Անժելա Գրիգորյանս, 2020 թվականի մարտի 2-ից աշխատելով որպես Արդարադատության նախարարության Իրավական ապահովման վարչության օրենսդրության մշակման բաժնի փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները՝

- Մասնակցել եմ «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և մի շարք հարակից օրենքների փոփոխությունների նախագծի փաթեթի մշակման աշխատանքներին: Նախագծերով առաջարկվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», ինչպես նաև «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքներում ուժը կորցրած ճանաչել այն դրույթները, որոնք վերաբերում են ֆինանսական կազմակերպությունների կողմից գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ խախտման փաստը հաստատվելու դեպքերում վերջիններիս տուժանքի ենթարկելու կարգավորումներին:

Նախագծի մշակման ընթացքում իրականացրել եմ հետևյալ գործառույթները՝

1. Մասնակցել եմ բազմաթիվ հանրային քննարկումների, միևնույն ժամանակ իրականացնելով միջգերատեսչական համաձայնեցումներ, քննարկումներ և վերլուծություններ,
2. Նախագծի մշակման արդյունքում անդրադարձ եմ կատարել Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքին, քանի որ ներկայիս կարգավորումներով չի ապահովվում բանկի, վարկային

կազմակերպության, կրեդիտավորողի և այլոց համար նախատեսվող տուժանքի օրենքով հստակ սահմանված չափորոշիչներից բխելու և թույլ տված խախտմանը համաչափ լինելու հանգամանքը: Տվյալ խնդրի լուծման նպատակով՝ կատարել են ուսումնասիրություն ներպետական մի շարք կարգավորումներում, մասնավորապես ՀՀ Սահմանադրությունում և Քաղաքացիական օրենսգրքում, միևնույն ժամանակ ուսումնասիրել են բանկային ոլորտին առնչվող ՀՀ դատական պրակտիկան, ինչպես նաև զուգահեռաբար իրականացրել են միջազգային փորձի ուսումնասիրություն՝ մասնավորապես Ավստրալիայի և Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարանների դատական ակտերի վերլուծում, խնդիրների վերհանում, համեմատություն ՀՀ օրենսդրության հետ:

3. Անդրադարձ են կատարել նաև որոշակիության սկզբունքին առնչվող խնդիրներին, քանի որ գործարար վարվելակերպին վերաբերող ներկայիս իրավական ակտերով սահմանված են դրույթներ, որոնց սահմանափակումների հիմքերը և ծավալը բավարար չափով անորոշ են, և այդ իրավունքների և ազատությունների կրողները ի վիճակի չեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Մատնանշված խնդրի լուծման համար ուսումնասիրել են մի շարք իրավական ակտեր, մասնավորապես Սահմանադրության դրույթները, Սահմանադրական դատարանի որոշումները (ՍԴՈ-630, ՍԴՈ-1270), տարբեր երկրների Գերագույն դատարանների որոշումներ, այդ թվում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները;
4. Ինչպես արդեն իսկ մատնանշված խնդիրների, այնպես էլ առաջացող հնարավոր խնդիրների լուծման համար ուսումնասիրել են մի շարք դատական որոշումներ, ինչպես քաղաքացիական գործի շրջանակներում, այնպես էլ ֆինանսական, բանկային, սպառողների շահերին վերաբերող: Ուսումնասիրության ընթացքում նաև հարցում են կատարել Դատական դեպարտամենտ՝ պարզելու բանկային համակարգին առնչվող տարբեր դատական գործերի, ինչպես նաև ֆինանսական հաշտարարին ներկայացված բողոքներին հիմք ծառայած հանգամանքները:
5. Ուսումնասիրել են ֆինանսաբանկային ոլորտին առնչվող մի շարք իրավական ակտեր («Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վարկային

կազմակերպությունների մասին» , «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքները և այլն), այդ թվում Կենտրոնական բանկի մի շարք Կանոնակարգեր՝ մասնավորապես Կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» Կանոնակարգ 8/05 հաստատելու մասին թիվ 229-Ն որոշումը, նույն որոշմամբ հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» Կանոնակարգը, ինչպես նաև Կանոնակարգ 8/03-ը, որոնք հիմնական ակտերն են համարվում ներկայիս իրավակարգավորումների սահմանման և առաջարկվող փոփոխության համար:

6. Ֆինանսական ոլորտում առկա խնդրի հստակեցման համար իրականացրել են Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի կողմից քննվող գործերի վիճակագրության վերլուծություն՝ հստակեցնելու սպառողների կողմից կատարված բողոքների քանակը ընդդեմ ֆինանսական կազմակերպությունների՝ ըստ ներկայումս առկա խնդրի:

Միննույն ժամանակ նշեմ, որ ելնելով ինչպես ներկայիս կարգավորման, այնպես էլ առաջարկվող փոփոխությանը վերաբերելի խնդիրները լուծելու անհրաժեշտությունից՝ ներկայումս Նախագիծը գտնվում է մշակման փուլում, որի վերաբերյալ պետք է իրականացվեն շարունակական հանրային և միջգերատեսչական քննարկումներ, առաջարկությունների հիման վրա կատարվեն վերլուծություններ:

- Պատասխանել են քաղաքացիներից, իրավաբանական անձանցից և այլ գերատեսչություններից ստացված գրություններին, որոնց վերաբերյալ մասնակցել են քննարկումների և իրականացրել են վերլուծություններ:
- Ապահովել են Կառավարությունից ստացված հանձնարարականների կատարումը:
- Մասնակցել են ներպետական իրավական ակտերի մշակմանը, շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցմանը

(«Հանրային խորհրդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծ, «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տարածքային ստորաբաժանումների համար դեպոզիտային հաշիվներ բացելու թույլտվություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և մի շարք հարակից օրենքների փոփոխությունների նախագծի փաթեթ և այլն):



**ԱՆԺԵԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**